ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀԿԳՄՍՆ «Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի /այսուհետ՝ Քոլեջ/

- «Ֆիզկուլտուրա» առարկա պարապող դասախոսի թափուր տեղի համար,
- «Ռուսաց լեզու» առարկա պարապող դասախոսի թափուր տեղի համար,
- «Զբոսաշրջություն» մասնագիտության մասնագիտական մոդուլներ պարապող դասախոսի թափուր տեղի համար,
- «Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար
- «Էլեկտրական սարքավորումների տեխնիկական շահագործում» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետի թափուր տեղի համար:

Վերոնշյալ թափուր տեղերի համար կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է՝

Հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,
Մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:
Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է ներքոնշյալ փաստաթղթերը.
1. դիմում,
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3. Անձնագիրը (բնօրինակը և պատճենը),
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Ձև 4),
6. Մեկ լուսանկար՝ 3Х4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ

համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

- Մրցույթին մասնակցելու մասին փաստաթղթերն ընդունվում են Քոլեջում՝ 2025 թվականի օգոստոսի 18-ից մինչև օգոստոսի 29-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից մինչև 17:00:
- Մրցույթը կկայանա 2025թ. սեպտեմբերի 3-ին ժամը 13:00-ին՝ Քոլեջում:
- Հասցեն՝ Տավուշի մարզ, ք. Իջևան, Նալբանդյան 5:

☎ Լրացուցիչ տեղեկությունների համար ծանոթանալ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ. դեկտեմբերի 24-ի № 48-Ն հրամանին կամ զանգահարել (0263) 4-36-59,
(094) 000415 հեռախոսահամարներով: